
ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՊԱՐԱԴՈՔՍՆԵՐԻ ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՐԱՆՈՒՅԻ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Սոցիոմշակութային պարադոքսների և տարըմբռնումների վերլուծության ու իմաստավորման հիմնախնդիրը արգասաբեր է միայն այն ժամանակ, երբ բացահայտվում են իրականության հետ դրանց առնչությունները: Հայկական հասարակական գիտակցության և սոցիալական աշխարհի իրական կառուցվածքի մեջ հիմնահարցի արդիականությունը կարելի է որոշել՝ ուսումնասիրելով հայոց սոցիումի արդի արմատական փոխակերպումների ուղղվածությունը, հասարակական զարգացման վեկտորների բազմազանությունը և դրանց գնահատման հարցում եղած տարըմբռնումները: Հետազոտության ընթացքում դիտարկման այդ տեսանկյունը և մասնագիտական գրականության մեջ առկա ինտելեկտուալ փորձը նպաստել են ինչպես հիմնահարցի տեսական ձևակերպմանը, այնպես էլ զարգացման միտումների բացահայտմանը: Ընդհանրացված տեսքով դրանք կարելի է սահմանել որպես համաշխարհայնացման և ինքնիշխան գոյատևման անհրաժեշտության, բազմաբևեռ և միաբևեռ աշխարհի, ազատական և ժողովրդավարական արժեքների, բազմակողմանի և միաչափ մարդու, սոցիոմշակութային միակերպության և խճանկարայնության, ազատության և տոտալ վերահսկողության պարադոքսալ փոխհարաբերությունների միտում:

Հետխորհրդային իրողությունները ցույց են տալիս, որ ժամանակակից սոցիալական փիլիսոփայության արդիական խնդիրներից մեկը դարձել է հասարակության մեջ սոցիոմշակութային պարադոքսների ու տարըմբռնումների, դրանց ծագման ու զործառության պայմանների, հասարակության ինստիտուցիոնալ կառուցվածքների ձևավորման մեխանիզմների, նոր իրողություններին մարդկանց հարմարման վերլուծությունը:

Ինչպես մարդկային մտածողության, այնպես էլ սոցիալական իրականության մեջ հայեցակետերի և սոցիալական տեսությունների հարուցած հակասությունների, անորոշությունների, այլընտրանքների և նմանատիպ երևույթների մեկնաբանությունը առավել անբողջական նկարագիր կարող է ստանալ ամենից առաջ սոցիալական փիլիսոփայության հոլովություն, ուր ակնհայտ են դառնում, թե բառերը ինչքան հեռու են իրականությունից և թե իրականությունը որքան բառազուրկ է իր երևույթներից շատերը նկարագրելիս: Ինչպես իրավացիորեն նկատում է Վ. Տերոյանը, սոսկ լեզվական տեսակետից չկան բառեր, որոնք միաժամանակ թե՛ այո նշանակեն և թե՛ ոչ, թե՛ բարեկամ նշանակեն և թե՛ թշնամի, թե՛ հաստատեն և թե՛ հերքեն: Սակայն այն, ինչ լեզվաբանորեն անկարելի է, չի

նշանակում թե հասարակագիտորեն ևս անկարելի է¹: Արմատական փոխակերպումների շրջանում լռում է ճշմարտությունը, և ճշմարտության անունով թևեր է առնում ամենայն ինչ: Մի բանաձևով ընկեր է դառնում թշնամին, և թշնամի է դառնում բարեկամը: Բոլորն էլ մի բան են ցանկանում, բայց, որովհետև բոլորն էլ ցանկանում են, այդ պատճառով դա անկարելի է դառնում: Առանց փոխակերպումների անկարելի պիտի լիներ ապացուցել արդարության անարդարությունը, հավասարության անհավասարությունը, եղբայրության բարբարոսությունը և ազատության բռնությունը: Մտածողության և իրականության այս ինքնահերքումը և ինքնառջնացումը դարձյալ վերափոխումների հետևանքներից են:

Յետխորհրդային երկրներում ընթացող արմատական փոխակերպումները ցույց են տալիս, որ առանց սոցիոմշակութային լուրջ վերափոխումների հնարավոր չէ հաղթահարել նախորդ համակարգի գոյության հիմունքները: «Ուժի իշխանության» վրա կառուցված սոցիալական համակարգից մշակութային օրինականացման արժանացած համակարգի անցումը դժվարին և երկարատև գործընթաց է, քանի որ դրա համար պահանջվում են նոր կառույցներ, գործառույթներ, ինչպես նաև ինստիտուտային համակարգ և այլն: Այս առնչությամբ տրամաբանական հարց է առաջանում, թե Հայաստանի քաղաքական ընտրանին և հասարակությունը որքանով են գիտակցում այս ամենի անհրաժեշտությունը և որքանով են նախապատրաստված այդ փոխակերպումներին: Քաղաքական կյանքում սոցիալական սուբյեկտները, որպես կանոն, հակված են արագ փոփոխությունների: Սա ինքնին հասկանալի հակվածություն է, քանի որ մարդիկ ակնկալում են կայունություն և որոշակիություն: Բայց պետք է նկատել, որ փոխակերպումների հաջողությունը պայմանավորված է ոչ միայն մարդկանց ցանկություններից, այլև համակարգի ներքին հնարավորություններից և համապատասխան մարդկային որակներից²:

Խորհրդային համակարգից ազատական-ժողովրդավարական համակարգի անցման դժվարություններից մեկն էլ հենց այն է, որ կոլեկտիվ կյանքին և հասարակական արժեքների գերակայությանը սովորած խավերը դժվարությամբ են համակերպվում ազատականության պահանջներին ու սկզբունքներին: Նախորդ համակարգը ղեկավարվում էր խնամակալական արժեքներով և իր վրա էր վերցրել մարդկանց աշխատանքի, հանգստի և նույնիսկ կենցաղի կազմակերպման հոգսը: Նման համակարգերը թեև մարդկանց զրկում էին անհատական նախաձեռնությունից, ազատությունից և իրավունքներից, բայց առօրյա կյանքում պահպանում էին որոշ գրավչություն, քանի որ սոցիալական իրականությունը դարձնում էին հասկանալի և կանխատեսելի: Մինչդեռ ժամանակակից հասարակությունները, և հատկապես փոխակերպվող համակարգերը ներքուստ խիստ հակասական և այլընտրանքային են: Մարդկանց որոշ խմբերի համար նման հասարակությունները ինքնաիրացման միջոցների միջավայր են, մյուսների համար`

¹ Տե՛ս **Վ. Տերոյան**, Գիտական և հարապարակախոսական աշխատություններ, Եր., 2006, էջ 142:

² Տե՛ս **Էդ. Հարությունյան**, Քաղաքական համակարգի զարգացման հիմնահնդիքները անցումային հասարակությունում, Եր., 2003, էջ 71:

օտարման: Այլընտրանքային իրականության բացասական հետևանքները հաղթահարող և սոցիոմշակութային որոշակիություն հաստատող միակ «օրենսդիրը» նման պայմաններում կարող է դառնալ պետությունը: Բայց անցումային հասարակություններում կուսակցական-պետական ընտրանին, որպես կանոն, առավելապես զբաղված է իշխանության վերարտադրության հոգսերով՝ համակարգի կայունության խնդիրը թողնելով ավանդական արժեքներին: Այս հանգամանքից ելնելով՝ որոշ հեղինակներ անցումային հասարակությունը բնութագրում են որպես սոցիոմշակութային երկընտրանքների և երկիշխանության համակարգ³: Ուստի այս համատեքստում անհրաժեշտություն է առաջանում իմաստավորել սոցիոմշակութային պարադոքսների և տարըմբռնումների հետ առնչվող խնդիրները:

Մասնագիտական գրականության մեջ «պարադոքս» հասկացությունը նախապես քննարկվել է ձևական տրամաբանության շրջանակներում և մեկնաբանվել է որպես տրամաբանական անլուծելի հակասություն: Ելնելով այս նկատառումներից՝ որոշ տեսաբաններ գտնում են, որ այն չի կարող կիրառվել սոցիալական վերլուծություններում: Ձևական տրամաբանության մեջ տրամաբանական հակասությունները դրսևորվում են պարադոքսների ձևով և համարվում են անլուծելի: Մինչդեռ գիտության զարգացումը առաջադրեց պարադոքսի լուծման մի քանի եղանակ, որոնք պարունակում են մի շարք վերապահումներ՝ լուծել պարադոքսը այս կամ այն կոնկրետ իմաստով՝ տվյալ նախապայմանից ելնելով: Բայց կան հակասություններ, որոնք այդպիսին են միայն ձևի տեսակետից: Մինչդեռ բովանդակային առումով այդպիսին համարվել չեն կարող: Նման դեպքերում հակասությունը ոչ թե տրամաբանական է, այլ դիալեկտիկական: Եթե առաջինը սկզբունքորեն անլուծելի է, ապա երկրորդ դեպքում խոսքը ոչ այնքան լուծման, որքան մի պարադոքսը մյուսի միջոցով հաղթահարելու մասին է:

Մանրամասնելով «պարադոքսի» և «հակասության» միջև եղած տարբերությունները՝ նկատենք, որ սոցիալական իրականության վերլուծության ժամանակ այդ հասկացությունները երբեմն կարող են կիրառվել համիմաստ նշանակությամբ՝ ձևի իմաստով պահպանելով կապը ձևական տրամաբանության, իսկ բովանդակային առումով՝ դիալեկտիկական տրամաբանության հետ: Դեռևս չի ձևավորվել սոցիալական պարադոքսների բնութագրման համընդհանուր տեսություն, քանի որ էական են տարակարծությունները մեթոդաբանական մոտեցումների միջև:

Տարբեր հեղինակների կողմից սոցիոմշակութային պարադոքսներին տրվել են տարաբնույթ մեկնաբանություններ: Նախ՝ այն սոցիալական երևույթ է, որը առանձին մարդկանց, սոցիալական խմբերի կամ ավելի լայն հանրույթների փոխազդեցության և հարաբերությունների հակասության, տարբերությունների, նաև շահերի անհամատեղելիության գիտակցում է⁴: Մեկ այլ մեկնաբանության համաձայն՝ պարադոքսը գործընթաց է,

³ Տե՛ս **Գ. Սողոմոնյան**, Անցումային հասարակության սոցիոմշակութային փոխակերպումները, Եր., 2005, էջ 45:

⁴ Տե՛ս **Льман Н.** Тавтология и парадокс в самоописаниях современного общества. М., 1991, էջ 194-196:

որում սոցիալական անձերը, խմբերը և սուբյեկտները փնտրում են մի-մյանց խոչընդոտելու հնարավորություններ՝ կանխելու հակառակորդի շահերի բավարարումը կամ փոխելու նրա հայացքները և սոցիալական դիրքորոշումը: Համեմատաբար լայն սահմանման համաձայն՝ պարադոքսը սոցիալական հակասությունների սրման սահմանային վիճակն է, որն արտահայտվում է անձանց և սոցիալական խմբերի միջև պայքարի տարբեր ձևերով և ուղղված է իրական կամ երևակայական մրցակցի չեզոքացմանը կամ մեկուսացմանը, որի նպատակը տնտեսական, սոցիալական, քաղաքական, հոգևոր շահերի իրականացումն է⁵:

Արդի քաղաքակրթության զարգացման ներկա ընթացքը հնարավորություն է տալիս իմաստավորելու սոցիալական պարադոքսների ծագման և դրսևորման հեռանկարները: Մասնավորապես, հասարակական համակարգի գրեթե բոլոր ոլորտներում կատարվում են սոցիալական այնպիսի փոփոխություններ, որոնք պահանջում են կամ նորովի մեկնաբանել նախկին հարացույցները, կամ էլ ձևակերպել նոր հարացույցներ: Ինչևէ, անհերքելի է այն փաստը, որ արդիականությունը նշանավորվում է ոչ միայն առաջընթացի հաղթարշավով, այլև այդ նույն նվաճումների ստվերային կողմերով, պահանջում է նորովի մեկնաբանել սոցիալական փոփոխությունների թե՛ թաքնված (լատենտ) կողմերը և թե՛ բացահայտ դրսևորումները:

Սոցիալական գիտությունների հոլովույթում պարադոքս և տարըմբռնում բառերը նորաձև լինելուց զատ ենթադրում են բովանդակային լուրջ մեկնաբանություն: Սոցիալական պարադոքսները կատարում են տարաբնույթ գործառույթներ, որը մի կողմից արտահայտում է նրա սոցիալական նշանակությունը, իսկ մյուս կողմից՝ հասարակական հարաբերությունների ներառվածությանը խանգարող բաղադրիչները: Առաջին դեպքում ուշադրության կենտրոնում սոցիալական պարադոքսների հետևանքներն են, իսկ երկրորդ դեպքում՝ սոցիալական սուբյեկտների հարաբերությունների ուղղվածության տարբերությունները: Սոցիալական պարադոքսները հանդես են գալիս որպես սոցիալական փոխազդեցության միջոց, երբ մարդկանց միջև ի հայտ են գալիս անհամատեղելի հայացքներ, այսինքն՝ տեղի է ունենում կողմերի հակազդեցություն: Բացի դրանից, այն կատարում է նաև կառուցողական, ապակառուցողական ախտորոշող գործառույթներ:

Սոցիոմշակութային իմաստով սոցիալական պարադոքսների հայեցակետի անհրաժեշտությունը ենթադրում է հիմնովին վերանայել այն սկզբունքները, որոնք առաջադրում են ժամանակակից սոցիալական փոփոխությունների տրամաբանությունը ուսումնասիրող տեսությունները: Այն, մասնավորապես, մեկնաբանվում է իբրև դինամիկ զարգացող գործընթաց, որը ի հայտ է գալիս որոշակի կառուցվածքային և մշակութային իրավիճակների դեպքում, երբ սոցիալական կառուցվածքում առաջանում են ապակազմակերպվածության, անհամաձայնության ձևեր, այլ կերպ ասած՝ երբ մարդկանց կյանքի սոցիալական գործունեության համատեքստը կորցնում է իր երբեմնի կայունությունը, համաձայնությունը, կազմակերպվածությունը,

⁵ Տե՛ս **Валлерстайн И.** Анализ мировых систем и ситуация в современном мире. СПб., 2001, էջ 89:

կարգավորվածությունը: Արդյո՞ք սոցիալական տարըմբռնումները ենթադրում են հասարակական համակարգի կայունության խախտում: Ըստ ամենայնի, մարդու հոգեկանում մշտապես առկա է կարգավորվածության, սովորույթի, կրկնողության, շարունակականության որոշակի ձգտում, որը կարելի է համարել էկզիստենցիալ անվտանգության ապահովման հիմնարար բաղադրիչ: Սոցիոմշակութային պարադոքսների մասին խոսվում է այն ժամանակ, երբ տեղի է ունենում կարգավորված սոցիալական իրականության կազմաքանդում, անկայունություն կամ սպասված արդյունքից շեղում, ինչը համակարգի և անհատի վրա թողնում է տարաբնույթ ազդեցություն: Սոցիալական համակարգի վրա այդ ազդեցությունը պայմանավորված է մի շարք գործոններով: Մասնավորապես, ինչքան մեծ են կայուն, կարգավորված միջավայրի և պարադոքսալ իրադարձություններով աչքի ընկնող պայմանների միջև տարբերությունները, ինչքան ընդգրկում է համընդհանուր կարգավորվածության բազային արժեքների և կանոնների փոփոխության աստիճանը, այնքան ուժեղ է պարադոքսի ազդեցությունը: Նկատենք, սակայն, որ պարադոքսները միշտ չէ, որ թողնում են բացասական հետևանքներ. կարող են ուղեկցվել դրական, կազմակերպող հատկություններով, երբ դրսևորվում են անսպասելիորեն⁶:

Սոցիալական պարադոքսները, ինչպես ցանկացած սոցիալական երևույթ, միաժամանակ և՛ օբյեկտիվ են, և՛ սուբյեկտիվ: Նրանց առաջացման ու գործառության պատճառ կարող են դառնալ գործող մշակույթի հիմքերին չհամապատասխանող իրադարձությունները, որոնք չեն համապատասխանում նաև տվյալ սոցիալական համակարգի ինքնությանն ու սոցիոմշակույթին: Պարադոքսների ու տարըմբռնումների պատճառ կարող են դառնալ նաև անցյալի և ապագայի սոցիալական փաստերի միջև տարածայնությունները, ինչպես նաև այն հանգամանքը, որ մարդիկ ընկնում են նոր մշակութային գերիշխանության տակ, կամ սոցիալականացված մշակույթը պայքարում է իրեն ծնող միջավայրի դեմ: Կենսաձևի փոփոխությունը (նոր տեխնոլոգիաների ներդրումը և ապրելակերպի անհատականացումը) ևս կարող է սոցիոմշակութային տարըմբռնումների ու պարադոքսների հարուցիչ դառնալ: Պակաս հատկանշական չեն նաև ներմշակութային անհամատեղելիության հետևանքով ծագած տարըմբռնումներն ու պարադոքսները, որոնք առաջանում են այն պատճառով, որ մշակույթի տարբեր սեզմենտներ զարգանում են տարբեր տեմպերով, ինչի հետևանքով տեղի է ունենում որոշակի մասերի մշակութային հետաճ:

Մասնագիտական հետազոտություններում և սոցիալական որոշ հայեցակարգերում առավել հաճախ պարադոքսը բնութագրում են որպես հակասությունների որոշակի խորացում, բախում, ինչը, որպես կանոն, առաջանում է անձանց, դասերի, ազգերի, խմբերի, պետությունների շահերի, դիրքորոշումների ու նպատակների անհամատեղելիությունից:

Սոցիոմշակութային պարադոքսների ուսումնասիրման և վերլուծության ժամանակ պետք է հաշվի առնել նաև նրանց առաջացման և դրսևորման ոլորտները (քաղաքական, տնտեսական, հասարակական), տարա-

⁶ Տե՛ս **Болонкин А. А.** XXI век – начало бессмертия людей // «Экогеософский альманах», 1999, №1, էջ 46:

ծաժամանակային հատկությունները, հնարավորությունների և հավակնությունների, անհրաժեշտության և նպատակահարմարության անհամապատասխանությունները, նախնական և վերջնական արդյունքների անհամատեղելիությունը և այլն:

Սոցիալական պարադոքսները կատարում են տարաբնույթ գործառույթներ, որոնք, մի կողմից արտահայտում են նրանց սոցիալական նշանակությունը, իսկ մյուս կողմից՝ հասարակական հարաբերությունների մեջ մարդկանց ներառվածությանը խանգարող բաղադրատարրերը: Առաջին դեպքում ուշադրության կենտրոնում սոցիալական պարադոքսների հետևանքների հիմնախնդիրներն են, իսկ երկրորդում՝ սոցիալական սուբյեկտների հարաբերությունների ուղղվածության տարբերությունները: Սոցիալական պարադոքսները հանդես են գալիս որպես սոցիալական փոխազդեցության միջոցներ, երբ մարդկանց միջև ծագում են անհամատեղելի հայացքներ, այսինքն՝ տեղի է ունենում կողմերի հակազդեցություն⁷:

Ժամանակակից հայտնի սոցիոլոգ Է. Գիդենսը խոսում է ոչ այնքան հասարակության կազմակերպման կառուցվածքային պարադոքսների, որքան հակասության (condradiction) մասին, այն դիտարկելով այնպիսի կառուցվածքային սկզբունքների միջոցով, որոնցից յուրաքանչյուրը մյուսին ժխտելով՝ միևնույն ժամանակ գտնվում են փոխազդեցության մեջ: Ըստ այդմ, Գիդենսը տարբերակում է հակասության երկու տեսակ՝ էկզիստենցիալ և կառուցվածքային⁸: Էկզիստենցիալ հակասությունը բովանդակում է բնության կամ մատերիական աշխարհի հետ մարդու ակտիվ փոխհարաբերությունը, և այդ իմաստով հակամարտությունը տվյալ մարդկային կեցության առանձնահատուկ հետևանքն է: Արդի սոցիալական փիլիսոփայության մեջ փորձելով իմաստավորել սոցիոմշակութային պարադոքսների էությունը՝ առանձնացնում են երկու կարևոր հանգամանք. առաջին՝ ռեալ գոյություն ունեցող մարդու՝ ինքն իր հետ նույնականանալու դժվարությունները, երկրորդ՝ սոցիալական աշխարհի ոչ նույնականությունը իր բնական միջավայրին: Մարդու և մարդկային աշխարհի առնչությամբ այսպիսի հակասության մշտական պրեդիկատներ են նրա կեցության իրական պայմաններն ու սոցիալական շփման ձևերը: Իրենք՝ այդ պրեդիկատները, մշտական չեն և անցողիկ են. դրանք փոփոխվում են, նպաստում կամ խոչընդոտում մյուսների առաջացմանը, դադարում են գոյություն ունենալ կամ պահպանվում են, կամ էլ մի հակասությունը հաղթահարվում է մյուսով: Սոցիալական իրականության մեջ մարդու և բնության անհամապատասխանության դեպքում մենք հաշվի ենք առնում և ընդհանրացնում սոցիալական տեսության օրինաչափությունները, հասարակական զարգացման առանձնահատկությունները, ինչպես նաև նրանց հետ անբակտելի կապի մեջ գտնվող յուրահատուկ, միայն մարդկանց բնորոշ կենսազործունեության, այսինքն՝ մշակույթի ձևերի ծագման ու կայացման գործընթացները:

Մարդկային ցեղի բնակության բնական միջավայրն օրգանական ամբողջություն է, նրա կեցության անհրաժեշտ հիմքը: Նա այդ ամբողջության

⁷ Տե՛ս **Зимбули А. Е.** Нравственная оценка: Парадоксы и алгоритмы. СПб., 2001, էջ 101:

⁸ Տե՛ս **Гидденс Э.** Социология. М., 2005, էջ 70:

կախյալ մասն է: Բայց իր օրգանական ամբողջությանը չհարմարվելը «ճակատագրական դեր խաղաց» իր բնության կամ այլ մարդկանց հետ մարդկային աշխարհի և կոնկրետ մարդու ոչ նույնականացման հարցում: Իր նմանների հետ հաղորդակցման մեջ մտնելու անհրաժեշտություն. ահա, թե ինչը դարձավ սոցիալական համակարգերի, հասարակական զարգացման և մշակույթի ծագման շարժառիթը:

Սոցիալական միջավայրը միմյանց հետ մարդկանց անդադար շփումը և փոխհամագործակցությունն է, որի ընթացքում ստեղծվում և օգտագործվում են բազմազան առարկայական ձևեր: Լինելով էներգետիկ կազմավորում՝ այսինքն՝ ստեղծված լինելով մարդկային կենսագործունեության միջոցով, սոցիալական իրականությունը բնութագրվում է հակասություններով և լարվածությամբ:

Մինչդեռ կառուցվածքային հակասությունը սոցիալականացման հետևանք է, այդ դեպքում հասարակական սկզբունքները դրսևորվում են հակասականորեն: Սոցիալական իրականության մեջ կառուցվածքային հակասությունն արտացոլվում է առաջնային և երկրորդային որակներով, որոնք անտիհոմիական փոխհարաբերության մեջ են գտնվում բազմաթիվ սոցիալական ինստիտուտների, ոլորտների, սոցիալական շերտերի հետ: Ի դեպ, հասարակության կառուցվածքային հակասությունը բնութագրվում է գյուղ-քաղաք, ազգային պետություն և քաղաքացիական հասարակություն և այլ զույգ հակադրամիասնություններով: Անդրադառնալով հիշյալ կառուցվածքային հակասություններին՝ հարկ է նկատել, որ, օրինակ, քաղաքակրթության զարգացման ներկա փուլում հետզհետե գնալով էլ ավելի են նվազում գյուղի և քաղաքի միջև գոյություն ունեցող տարբերությունները, ինչը համապատասխանում է ժամանակակից սոցիալական համակարգերի զարգացման միտումներին՝ բոլոր կարգի սոցիալական ոլորտների և կառույցների ամբողջարկմանը: Բայց գյուղական միջավայրը ունի իր էական բնութագրիչները, բարոյական նորմերն ու ավանդույթները, սոցիալական կարգն ու կարգավորվածությունը, որոնք բնութագրական չեն քաղաքային միջավայրին, կամ էլ ընդունելի են միայն որոշ վերապահումներով: Պատահական չէ, որ գյուղական նորմերն ու ավանդույթները քաղաքային միջավայրում արժևորվում են «սառը» մշակույթի տեսանկյունից: Կառուցվածքային հակասության դրսևորումը թեև լիովին չի վերացնում էկզիստենցիալ հակասությունը, բայց այն թուլացնում է:

Կառուցվածքային հակասության շրջանակներում առաջնային և երկրորդային հակասությունների առանձնացումը հնարավորություն է տալիս պարզելու, թե ներքին, տարածական, տեղային գործոնները ինչ ազդեցություն կարող են ունենալ արտաքին, համաշխարհային գործընթացների վրա, այսինքն՝ համընդհանուր սոցիոմշակութային հավակնությունները և ակնկալիքները համապատասխանում են արդյոք ազգային, պետական, հասարակական հնարավորություններին, թե՞ ոչ:

Առաջնային հակասությունը արտացոլվում է գյուղ-քաղաք անտիհոմիայի միջոցով⁹: Այս փաստը ուշագրավ է այնքանով, որ քաղաքային միջավայրի խորհրդանշական կառույցները պետականության ձևավորման միջոցներ են: Ինչպես պնդում է Գիդդենսը, քաղաքն իրենից ներկայաց-

⁹ Стен Гидденс Э. Устроение общества. М., 2005, էջ 280:

նուն է օտար բնություն, որտեղ գյուղական նորմերը, բարքերը, մշակույթը թարգմանվում են «սառը» մշակույթի լեզվով, թեև գյուղական միջավայրի հետ կապերը պետք է պահպանվեն, քանի որ այդ կապերն են ձևավորում պետական կազմակերպման կառուցվածքային տարրերը: Սակայն այդ կապերը պահպանելը հեշտ չէ, քանի որ այն դրսևորվում է ձևական ինստիտուտների միջոցով, այլ կերպ ասած՝ քաղաքի և գյուղի միջև խզվածությունը հետզհետե խորանում է, և գերկենտրոնացվածությունը քաղաքում կարող է բացասական հետևանք թողնել թե՛ քաղաքի, թե՛ գյուղի վրա: Այս ամենի գիտակցումից ելնելով՝ պետության համար շրջադարձային մշակություն ունեցող իրադարձությունների ժամանակ այդ խզվածությունը արհեստական միջոցներով կամրջվում է:

Քաղաքային և գյուղական միջավայրերի միջև գոյություն ունեցող հակամարտությունը, ինչպես նաև խառնաշփոթ հարաբերությունները կառուցվածքային հակասության յուրահատուկ ձևեր են: Էկզիստենցիալ հակասությունը, որն արտացոլվում է ավանդույթների և ազգակցական կապերի միջոցով, չի պահպանվում պետական իշխանության շրջանակներում: Ձևավորման նախնական շրջանում պետությունը ձգտում է ազատվել ավանդույթների ազդեցությունից, որպեսզի ամրապնդվող իշխանության մեխանիզմները ձերբազատվեն ներգործություններից: Այս պայմանը հնարավոր է հաղթահարել միայն ձևի տեսանկյունից, բայց զարգացման հաջորդ փուլերում պետությունը ստիպված է իր ներքին և արտաքին քաղաքականությունը համաձայնեցնել ավանդույթների հետ, քանի որ դրանք շարունակում են գործառել պետական ինստիտուտների ազդեցության սահմաններից դուրս¹⁰: Որքան պետության գործունեությունը և հնարավորությունները դառնում են վերահսկելի, այնքան նա կենտրոնացնում է պետական իշխանության հիմնական թևերը և վարչական ապարատը: Համաշխարհային գործընթացների համատեքստում տեղի է ունենում հասարակության անընդհատ մասնատման և կոտորակման գործընթաց, որը մինչև ժամանակ մշակում է անհատականացում և տիպականացում: Արդի քաղաքակրթության շրջանակներում յուրաքանչյուր ոք ազատ է պահպանելու և զարգացնելու իր անհատականությունը, թեև համացանցի միջոցով հաղորդակցման հնարավորությունն իրականացվում է միօրինակ կանոններով և լեզվով: Համաշխարհային հաղորդակցության արդի փուլին մասնակցող ամեն մի սուբյեկտ ստիպված է ընդունելու խաղի առաջարկված այդ կանոնները, եթե ցանկանում է լսվել և հասկացվել: Նույնը վերաբերում է նաև տարածքային ինքնուրույնությանը, որի կարգավորումը կատարվում է «մարդու իրավունքների» իրավական հայեցակետերի հիման վրա: Հաշվի առնելով աշխարհի բաժանումներն ու մի քանի վերաբաժանումները, ինչպես նաև ելնելով հետագա հակամարտությունները կանխելու նպատակահարմարությունից՝ համաշխարհային գործընթացներում ի վերջո ազգերի ինքնորոշման սկզբունքը ածանցվեց սահմանների անխախտելիության և մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքներից: Մարդու իրավունքների պաշտպանության սկզբունքները ազատության վերացական ըմբռնումներ չեն: Դրանք իրենցից ներկայացնում են

¹⁰ Стен Фролов Э. Д. Парадоксы истории. Парадоксы античности. СПб., 2004, էջ 377:

արևմտյան հասարակության բնականոն կենսագործունեությունը ապահովող կողմերի կողմ համակարգ¹¹:

Առաջնային հակասության հաջորդ հակադրամիասնությունը դրսևորվում է պետություն-քաղաքացիական հասարակություն երկընտրանքի տեսքով: Կառուցվածքային առումով պետությունը և քաղաքացիական հասարակությունը գտնվում են հակասության մեջ, բայց վերջինս մեկնաբանվում է որպես պետության այլընտրանք:

Սոցիալ-փիլիսոփայական և քաղաքագիտական վերլուծություններում քաղաքացիական հասարակությունը մի կողմից մեկնաբանվում է որպես «մնացած» հասարակության արդյունավետության և կայունության նախադրյալ, մյուս կողմից՝ որպես հասարակության պաշտպան գործոն՝ այն «մասերից», որոնք ունեն մեծ իշխանություն¹²: Քաղաքացիական հասարակության ձևավորման համար խթան հանդիսացած այդ շարժումները այլևս դիտարկվում են որպես «երրորդ ուժ», որոնք ընկած են պետության և տնտեսության, «քաղաքացու», «էթնոսի անդամի» և «շուկայի մասնակցի» բարեկեցիկ կյանքի հայեցակարգի ձևավորման հիմքում: Ո՛չ շուկան, ո՛չ պետությունը և ո՛չ էլ ազգությունը չեն տալիս գոհացուցիչ պատասխան բարեկեցիկ կյանքի վերաբերյալ, այլ միայն քաղաքացիական հասարակության մասին գաղափարն է, որ մերժում և ընտրում է իր մեջ այդ մասնավոր պատասխանները: Այս չափանիշները կարելի է ենթարկել տարածական բնութագրության. օրինակ՝ շուկան համաշխարհային երևույթ է, պետությունը սահմանափակված է ազգայինով և տարածքով, մինչդեռ քաղաքացիական հասարակությունը առավելապես տարածքային է: Քաղաքացիական հասարակությունը, որպես տարածականորեն սահմանափակված երևույթ, ժամանակակից սոցիոմի անբաժանելի մաս է, իսկ հասարակությունը՝ որպես ամբողջական համակարգ, արդյո՞ք արդյունավետորեն իրականացնում է իր գործառույթները, այսինքն՝ ապահովո՞ւմ է մեկնարկային պայմաններ ազատություն, արդարություն, հավասարություն, պատասխանատվություն, սոցիալական համերաշխություն արժեքների համար:

Համաշխարհայնացման արդի գործընթացները տարածքային զարգացման վրա կարող են ունենալ ինչպես դրական, այնպես էլ բացասական հետևանքներ, ըստ այդմ՝ քաղաքացիական հասարակությունը միջոց է խոցելի խմբերին շուկայի ամենաիշխան ազդեցությունից պաշտպանելու համար: Հասարակության տնտեսական ոլորտում քաղաքացիական հասարակությունը խաղում է զբաղվածության և գործազրկության միջև միջնորդի դեր, օգնում է մարդկանց մնալ իրազեկ, «միացված» հասարակությանը, այլ ոչ թե համարվել վերջինիս ձևական անդամ՝ դառնալով իրական հասարակության «կենդանի մեռյալներ»¹³:

Պատմական հեռանկարի ուրվագծման տեսակետից քաղաքացիական հասարակությունը որոշիչ դեր է խաղում տարբեր ազգերի նույնակա-

¹¹ Տե՛ս **Էդ. Հարությունյան**, Ազատական ժողովրդավարական սոցիոմշակույթը որպես կենսաոճ: «Անցումային հասարակություն. սոցիոմշակութային փոխակերպումներ», Եր., 2006, էջ 7:

¹² Տե՛ս **Салустович П.** Европейский социум в условиях перехода: Гражданское общество и социальная работа // «Свободная мысль-21», № 8, 2001, էջ 2:

¹³ **Luhmann N.** Die Unterscheidung von "Staat und Gesellschaft": Vortrag auf dem 12. Weltkongress für Rechts-und Sozialphilosophie, Athen, 1985, p. 78.

նությունների ձևավորման և պահպանման համար: Թերևս ազգի չափազանցված գնահատականները, ինչը բնորոշ է ազգային շարժումներին կամ խմբերին, տանում են «մյուսների» բացառմանը: Այսօր մենք բախվում ենք հակասական միտումների հետ: Մի կողմից համաշխարհայնացման գործընթացը կլանում է ոչ միայն տնտեսությունը, այլև մշակույթը, նպաստում վերազգային նույնականության նախազգծերի իրագործմանը («ամերիկացիներ», «եվրոպացիներ»)¹⁴: Մյուս կողմից՝ բախվում ենք ազգային պետությունների մակարդակում «ուրիշի, օտարի» բացառմանը և բազմազգ պետություններում ազգային խմբերի միջև ծագած ճնշումներին ու հակասություններին: Հայտնի տեսաբան Ս. Հանթինգթոնը զգուշացնում է նաև այն վտանգի մասին, որ համագործակցությունը կարող է դառնալ ինքնակենտրոն և անդրադարձում՝ հակառակ մյուսների: «Մենք-ուրիշները» հակադրությունն իմաստավորվում է ոչ թե ազգային հատկանիշների, այլ համապատասխան սոցիալ-տնտեսական կարգի կողմնակիցների և հակառակորդների տարբերակման հիման վրա: Այս տարբերակումը անհրաժեշտություն է, քանի որ մեզանից շատերը Արևմուտքում կատարվող փոփոխությունները չեն ընկալում որպես կայուն միտում, դրանք մեկնաբանելով որպես սոսկ քարոզչական հնարքներ, որոնց հետևում թաքնված են կամ Արևմուտքի այլասերումը, կամ նրա գաղտնի ազգայնականությունը: Այնինչ սա մի հիմնարար իրողություն է, որի հետ պետք է հաշվի նստել:

Մյուս կողմից, պարզվում է, որ տնտեսության համաշխարհային հսկաները, հենց իրենց մեծության պատճառով, միշտ չէ, որ արդյունավետ են գործում: Դրանով իսկ ճանապարհ է բացվում փոքր ձեռնարկությունների համար, որոնք, շնորհիվ նույն համակարգչային տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունների և ճկունության, լիովին ի վիճակի են դիմակայելու տնտեսական մրցակցությանը: Փոքր խմբերը և առանձին անհատները տեղեկատվության փոխանակման և տարածման համարյա անսահմանափակ հնարավորություն են ստանում:

Համաշխարհայնացման արդի փոխակերպումները բերում են բազմապիսի և ահազնացող այնպիսի վտանգներ, որոնք լուրջ մարտահրավերներ են ժամանակակից քաղաքակրթությանը: Ներգրավվելով այդ գործընթացների մեջ՝ մենք ոչ թե հաջողության երաշխիքներ ենք ստանում, այլ միայն մյուս ժողովուրդների հետ պատասխանատվությունը կիսելու և համատեղ, արդյունավետ լուծումներ փնտրելու հնարավորություն: Այդ լուծումները վերաբերում են ոչ միայն համայն մարդկությանը, այլև մեր ազգային ամենահրատապ հիմնահարցերին: Եվ ազգայինը հենց այն ոլորտն է, որն առավել բաց է հետագա փոխակերպման և զարգացման համար: Այստեղ մենք ամբողջարկման գործընթացների մասնակցելու մեծ ներուժ ունենք, որ պետք է անպայմանորեն օգտագործվի: Իսկ այդ խնդիրները մենք ինքներս ենք լուծելու՝ ամենայն զգուշությամբ և պատասխանատվության ողջ գիտակցումով:

ЕРАНУИ МАНУКЯН – Функциональные особенности социокультурных парадоксов. – В статье анализируются различные социокультурные парадоксы, их

¹⁴ Տե՛ս **Хантингтон С.** Кто мы? М., 2005, էջ 177:

понимание и функционирование. По результатам этого контент-анализа выделены два типа понимания парадоксов – экзистенциальное и структурное. Первый из них описывает смысл отношений человек–мир, а второй – ролевую структуру социальных отношений.

YERANUHI MANUKYAN – *Functional Features of Sociocultural Paradoxes.* – The article is devoted to the analysis of different understanding and functioning of paradoxes. As the result of the content analysis of social-cultural paradoxes, the author differentiates two types of understanding: existential and structural. The first one describes the meaning of man-world relationships, and the second – the role structure of social relations.